



APRICOT  
Aghveran Resort

Ուրույն հայկական հյուրընկալություն



[apricothotels.am](http://apricothotels.am)

# Անդորր և խաղաղուղւթյուն բնության գրկում

Նորաբաց Ապրիկոտ Աղվերան Ռեզորթը գտնվում է Հայաստանի ամենագեղատեսիլ վայրերից մեկում՝ դրախտային Աղվերանում, ծովի մակարդակից 1980մ բարձրության վրա: Հանգստյան գոտին երկու կողմից շրջապատված է վերընձիռված անտառներով, իսկ տարածքի ողջ երկայնքով հոսում է գետակ: Ամբողջ շրջակայքում համատարած անդորր է, հանգստության մեջ լավում է ջրի խշշոցն ու թռչունների ճովողյունը, ինչը տարածքը վերածում է ամմնացորդ հանգստի, իսկ ցանկության դեպքում՝ նաև, արդյունավետ աշխատանքի համար կատարյալ մի վայրի:



Աղվերան՝ Հայաստանի ամենագեղատեսիլ վայրերից մեկը  
Տեսարան Ապրիկոտ Աղվերան Ռեզորթի Յասամանների արահետից

## Հանգիստ լիակատար հարմարություններով

Մեզ մոտ դուք կարող եք վայելել կատարյալ հանգիստ, քանի որ հյուրատան և դուպլեքս շալեների սենյակները համալրված են բոլոր անհրաժեշտ հարմարություններով. հյուրատնայակ հարմարավետ կահույքով ու հեռուստացույցով, ամբողջությամբ կահավորված խոհանոց և ընթրիչի համար նախատեսված տարածք, լոգասենյակ շարժական ցնցուղով և լոգանքի համար անհրաժեշտ պարագաներով, ննջասենյակ հավելյալ ծածկոցներով, մահճակալի ընտրության հնարավորությամբ և հեռուստացույցով: Այստեղ կգտնեք նաև մեծ պատշգամբներով համարներ, որտեղից կարող եք վայելել անտառային բնության տեսարանն ու մաքուր օդը: Բոլոր համարներն ունեն նաև չիրկիզվող սեյֆ-պահարան, վարսահարդարիչ, հեռախոս, արբանյակային հեռուստատեսություն, գերարագ ինտերնետ կապ, իրերի պահեստավորման պահարաններ, օրորոցներ և արդուկ/արդուկի սեղան (վերջիններս տրվում են ըստ պահանջի) և այլն: Համարները սպասարկվում է յուրաքանչյուր օր մաքրությունն ապահովող թիմի կողմից: Նշենք նաև, որ յուրաքանչյուրի հաճելի հանգիստը երաշխավորելու համար հյուրատանը (ինչպես համարներում, այնպես էլ հանրային տարածքներում), շալեներում և ռեզորթի այլ փակօթյա տարածքներում ծխելն արգելվում է:

Ռեզորթի հիմնական մասնաշենքի՝ Անտառային հյուրատան ընդունարանը, որի բարեհամբույր և պրոֆեսիոնալ անձնակազմը դիմավորում և գրանցում է Ռեզորթի բոլոր հյուրերին, գործում է 24/7 և մշտապես պատրաստ է պատասխանել և լուծում գտնել Ձեր բոլոր հարցերին:

Հյուրատունն ունի 3 բնակելի հարկերում տեղակայված 20 սուիթ համար, որոնց մեծ մասն ունի դեպի սաղարթափիտ անտառ նայող պատշգամբ: Այստեղ ընդունարանի (Օ) հարկում գործում է նաև լաունջ-բար:

Մեր շալեները, որոնք տեղակայված են Յասամանների արահետի երկայնքով հատուկ նախատեսված են մեծ ընտանիքների և ընկերական հավաքների համար: Յուրաքանչյուր շալե ունի մի քանի դուպլեքս առանձին մուտքերով: Մեկ դուպլեքսը (կախված տեսակից) կարող է տեղավորել մինչև 6 անձ:

## Հանգիստ գուրմանների համար

Մեր երկհարկանի Անտառային ռեստորան այցելելիս Դուք կարող եք ճաշակել տեղական թարմ ապրանքներից պատրաստված անուշահամ և առողջարար ուտեստներ և զովացուցիչ ըմպելիքներ ինչպես դեպի անտառ և Յասամանների արահետ կայրղ տաքուկ սրահում, այնպես էլ բացօթյա վերանդայում: Մեր խոհարարները Ձեզ են առաջարկում ոչ միայն սնդարար բուֆետ-սախաճաշ այլև շեֆ-խոհարարի հետաքրքիր և կրբահամ ձեռագրով պատրաստված ուտեստների լայն ընտրանի ճաշի և ընթրիքի համար: Ավելին, Դուք կսան կկարողանաք վայելել մեր համեղ խոհանոցը Ձեր սենյակում շուրջօրյա ռեժիմով (23:00-ից հետո որոշակի սահմանափակումներով), ինչպես կան վայելել մեկ բաժակ տաք սուրճ մեր լոբի բարում կամ Ձեր երեկոն անցկացնել ռեստորանի լաունջ տարածքում: Այս վայրը հիանալի է տարբեր ֆորմատի խնջույքների և միջոցառումների կազմակերպման համար: Հանգստավայրի շքեղ բնության հնարավորություն է տալիս կազմակերպել միջոցառումներ և խնջույքներ անմիջապես այգում կամ անտառներում:



## Հիանալի վայր բազմազան և զվարճալի հանգստի համար

Հանգստավայրն ամբողջությամբ նախատեսված է Ձեր և Ձեր ընտանիքի լիակատար հանգիստը, զվարճանքն ու վառ հիշողություններն ապահովելու: համար: Սպան և լողավազանը մեծահասակների և երեխաների համար, մանկական գոտին ու զվարճանքի կենտրոնը, ֆուտբոլի և վոլեյբոլի դաշտերն ընդամենը մի քանիսն են այն զբաղմունքներից, որոնք Ձեր հանգիստը կդարձնեն իսկապես հիշարժան: Այս ամենի շարքում, հիարկե, առանձնահատուկ ուշադրության է արժանի բացօթյա լողավազանը, որը շրջապատված է Աղվերանի սաղարթախիտ բնությամբ և ակամայից ստեղծում է յուրօրինակ մթնոլորտ իրական հանգստի համար:



Այստեղ խաչվում են ուրույն հայկական հյուրընկալությունն ու սպասարկման ոլորտի միջազգային ամենաբարձր չափանիշները ստեղծելով որակի ու հարմարավետության սքանչելի համադրություն: Այո, այստեղ առկա է այն ամենը, ինչ անհրաժեշտ է, որպեսզի Ապրիկոտ Աղվերան Ռեզորթը դառնա Ձեր ուղևորության հաջորդ նպատակակետը:



### Մեր հարմարությունները.

Հյուրասենյակներ/շալեներ, 24/7 ընդունարան, մաքրության ծառայություն, լաունջ-բար, ռեստորան, բացօթյա լողավազան (վերահսկելի ջերմաստիճանով) մեծահասակների և երեխաների համար, սաունա, բացօթյա մանկական խաղահրապարակ, փակօթյա խաղերի գոտի, ֆուտբոլի դաշտ, վոլեյբոլի դաշտ, տաղավարներ հանգստի և առանձնանալու համար, զբոսանքի ու լեռնամագլցման հսկա տարածք, անտառներ, գետ, կամուրջներ և այլն:



# Մեր սեկյակները.

Սեկյակի տեսակը	Մահճակալի տեսակը	Զարմարությունները	Զարկը	Զափսը (մ²)
Մեկտեղանոց/ երկտեղանոց հատուկ համար	Երկու առանձին/ մեկ մեծ մահճակալ	զգեստապահարան, չիրկիզվող պահարան, ցնցուղ, վարսահարդարիչ, լոգասենյակի պարագաներ, հողաթափեր, զուգարան, Էլեկտրական թեյնիկ, հեռուստացույց արբանյակային հեռուստատեսությամբ, ինտերնետ, գրասեղան, հեռախոս, օրորոց, արդուկ, արդուկի սեղան	0	35
Մեկտեղանոց/ երկտեղանոց հատուկ համար	Երկու առանձին/ մեկ մեծ մահճակալ	զգեստապահարան, չիրկիզվող պահարան, ցնցուղ, վարսահարդարիչ, լոգասենյակի պարագաներ, հողաթափեր, զուգարան, ամբողջությամբ կահավորված խոհանոց, սառնարան, պատշգամբ, Էլեկտրական թեյնիկ, հեռուստացույց արբանյակային հեռուստատեսությամբ, ինտերնետ, գրասեղան, հեռախոս, օրորոց, արդուկ, արդուկի սեղան	0	40
Սուպերհիո՛ր՝ մեկտեղանոց/ երկտեղանոց/ երեք տեղանոց	Երկու առանձին/ մեկ մեծ մահճակալ, մեկ բազմոց-մահճակալ	զգեստապահարան, չիրկիզվող պահարան, ցնցուղ, վարսահարդարիչ, լոգասենյակի պարագաներ, հողաթափեր, զուգարան, ամբողջությամբ կահավորված խոհանոց, սառնարան, Էլեկտրական թեյնիկ, բազմոց, բազկաթոռ, ընթրելու տարածք, հեռուստացույց արբանյակային հեռուստատեսությամբ, ինտերնետ, գրասեղան, հեռախոս, օրորոց, արդուկ, արդուկի սեղան	1,2,3	45
Սուպերհիո՛ր պատշգամբով՝ մեկտեղանոց/ երկտեղանոց/ երեք տեղանոց	Երկու առանձին/ մեկ մեծ մահճակալ, մեկ բազմոց-մահճակալ	զգեստապահարան, չիրկիզվող պահարան, ցնցուղ, վարսահարդարիչ լոգարանի պարագաներ, հողաթափեր, զուգարան, ամբողջությամբ կահավորված խոհանոց, Էլեկտրական թեյնիկ, սառնարան, բազմոց, բազկաթոռ, ընթրելու տարածք, հեռուստացույց արբանյակային հեռուստատեսությամբ, պատշգամբ, գրասեղան, հեռախոս, ինտերնետ, արդուկ, արդուկի սեղան, օրորոց	1,2,3	55
Շայն ստանդարտ՝ մեկտեղանոց/ երկտեղանոց	Երկու առանձին / մեկ մեծ մահճակալ	զգեստապահարան, չիրկիզվող պահարան, լոգարանային զուգարանով, վարսահարդարիչ, լոգարանի պարագաներ, հողաթափեր, հեռուստացույց արբանյակային հեռուստատեսությամբ, ինտերնետ, ամբողջությամբ կահավորված խոհանոց, Էլեկտրական թեյնիկ, գրասեղան, հեռախոս, արդուկ, արդուկի սեղան, օրորոց	1,2	25
Շայն վերանդայով՝ մեկտեղանոց/ երկտեղանոց/ չորս տեղանոց	Երկու առանձին / մեկ մեծ մահճակալ, մեկ բազմոց	զգեստապահարան, չիրկիզվող պահարան, լոգարանային զուգարանով, վարսահարդարիչ, լոգասենյակի պարագաներ, հողաթափեր, հեռուստացույց արբանյակային հեռուստատեսությամբ, ինտերնետ, ամբողջությամբ կահավորված խոհանոց, Էլեկտրական թեյնիկ, բազմոց, գրասեղան, հեռախոս, արդուկ, արդուկի սեղան, օրորոց	1,2	40
Շայն Սուպերհիո՛ր՝ մեկտեղանոց/ երկտեղանոց/ երեք տեղանոց/ հինգ տեղանոց	Երկու մեծ մահճակալ, մեկ բազմոց-մահճակալ	Զյուրասենյակ, երկու ննջարան, ամբողջությամբ կահավորված խոհանոց, երկու լոգասենյակ զուգարանով, առանձին զուգարան, վարսահարդարիչ լոգասենյակի պարագաներ, հողաթափեր, ընթրելու տարածք, հանգստի տարածք, հեռուստացույց արբանյակային հեռուստատեսությամբ, պատշգամբ, ինտերնետ, չիրկիզվող պահարան, Էլեկտրական թեյնիկ, գրասեղան, հեռախոս, արդուկ, արդուկի սեղան, օրորոց	-	90

## Մեր սենյակները.

Սենյակի տեսակը	Մահճակալի տեսակը	Գարմարությունները	Գարկը	Չափսը (մ²)
Շալե լյուքս՝ մեկտեղանոց/ երկտեղանոց/ երեք տեղանոց/ չորս տեղանոց/ հինգ տեղանոց/ վեց տեղանոց	Երկու մեծ մահճակալ, երկու բազմոց-մահճակալ	Գլուխասենյակ, երկու ննջարան, ամբողջությամբ կահավորված խոհանոց, երկու լոգասենյակ ցնցուղով և զուգարանով, մեկ լոգասենյակ լոգարանով, առանձին զուգարան, վարսահարդարիչ, լոգասենյակի պարագաներ, հողաթափեր, ընթրելու տարածք, հանգստի տարածք, գրասեղան, հեռախոս, հեռուստացույց արբանյակային հեռուստատեսությամբ, պատշգամբ, վերանդա, ինտերնետ, չիրկիզվող պահարան, էլեկտրական թեյնիկ, արդուկ, արդուկի սեղան, օրորոց	-	90